ԵՊՀ օլիմպիադա – 2024 թ.
Հայոց պատմություն (25 միավոր)

1. **Ո՞ր թվականին Ռուսա I-ի հետ բախման արդյունքում Սարգոն II-ը անհաջողություն կրեց.**
   1) Ք.ա. 719 թ.
   2) Ք.ա. 716 թ.
   3) Ք.ա. 735 թ.
   4) Ք.ա. 714 թ.

2. **Հարցը հանվել է, բոլոր աշակերտները ստացել են 0,5 միավոր:**

3. **Ե՞րբ Հրահատ III-ը պաշարեց Արտաշատը.**
   1) Ք.ա. 68 թ.
   2) Ք.ա. 66 թ.
   3) Ք.ա. 67 թ.
   4) Ք.ա. 65 թ.

4. **Ե՞րբ են ռուսները գրավել Ախալքալաքի բերդը.**
   1) 1806 թ.
   2) 1807 թ.
   3) 1810 թ.
   4) 1811 թ.

5. **Ե՞րբ են ռուսական զորքերը գրավել Հասան Կալան.**
   1) 1829 թ. մայիսի 28-ին
   2) 1829 թ. հունիսի 24-ին
   3) 1829 թ. հունիսի 27-ին
   4) 1829 թ. սեպտեմբերի 2-ին

6. **Ե՞րբ է ծնվել Աղբյուր Սերոբը.**
   1) 1860 թ.
   2) 1862 թ.
   3) 1864 թ.
   4) 1865 թ.

7. **Ե՞րբ է Պետերբուրգում գնդակոծվել բանվորների խաղաղ ցույցը.**
   1) 1905 թ. հունիսի 29-ին
   2) 1905 թ. հուլիսի 12-ին
   3) 1905 թ. հունվարի 9-ին
   4) 1905 թ. օգոստոսի 1-ին

8. **Ո՞ր թվականին է գրվել «Մարտական հրահանգներ» հայտնի կանոնագիրքը.**
   1) 1902 թ.
   2) 1904 թ.
   3) 1906 թ.
   4) 1908 թ.

9. Ե՞րբ է սկսել կազմավորվել արևմտահայ զորաբաժինը (դիվիզիա).
1) 1917 թ. դեկտեմբերին
2) 1917 թ. հոկտեմբերին
3) 1918 թ. դեկտեմբերին
4) 1918 թ. մարտին

10. Որքա՞ն է Վանա լճի բարձրությունը ծովի մակերևույթից.
1) 1916 մ.
2) 1545 մ.
3) 1113 մ.
4) 1720 մ.

11. Որտե՞ղ է գտնվում Սիփան լեռը.
1) Սևանա լճից հյուսիս
2) Վանա լճից հյուսիս
3) Ուրմիո լճից հյուսիս
4) Արարատյան դաշտում

12. Ք.ա. 830-ական թվականներին Հայկական լեռնաշխարհում հայտնի համադաշնություններից ո՞րն էր ամենամեծը.
1) Դիաուխի
2) Էթիունի
3) Մելիտեա
4) Զաբախա

13. Որտե՞ղ էր կառուցվել Սամոսատ քաղաքը.
1) Ծոփքում
2) Կապադովկիայում
3) Փոքր Հայքում
4) Կոմմագենեում

14. Էջմիածնի 1677 թ. գաղտնի ժողովին քանի՞ հոգևոր և աշխարհիկ գործիչներ են մասնակցել.
1) 12
2) 11
3) 6
4) 14

15. Ո՞վ էր Բայազետի 500-հոգանոց կամավորական ջոկատի հրամանատարը.
1) Սումբատովը
2) Մ. Վեքիլյան
3) Մելիք-Մարտիրոսյանը
4) Գ. Մանուչարյանը

16. Որքա՞ն է եղել հայ կամավորների թիվը 1915 թ. վերջերին և 1916 թ. սկզբին.
1) 10000
2) 12000
3) 6000
4) 5000

17. Ո՞վ է ժամանակակից երկրաքիմիա գիտաճյուղի հիմնադիրը.

1) Անդրեաս Արծրունին
2) Հակոբ Չամչյանը
3) Հովհաննես Ադամյանը
4) Խորեն Սինանյանը

18. Քանի՞ գյուղ էրզրումահայերը վերաշինեցին կամ հիմնադրեցին Ախալքալաքի գավառում.

1) 30
2) 50
3) 12
4) 75

19. Թվարկված ուսումնասիրություններից ո՞րն է պատկանում Ն. Ադոնցի գրչին.

1) «Քննական պատմություն հայոց»
2) «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»
3) «Ազգապատում»
4) «Հայ ժողովրդի պատմության տեսություն»

20. Ո՞վ է ստորև բերվող վկայության հեղինակը.

«Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ [գետերը] խառնվում են, և այնտեղ, բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»:

1) Պլուտարքոսը
2) Պոլիբիոսը
3) Խորենացին
4) Ստրաբոնը

21.Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպներով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղիներով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:

1) Պլուտարքոսը
2) Ապպիանոսը
3) Դիոն Կասիոսը
4) Ստրաբոնը

22. Հայ բանաստեղծներից ո՞վ է այսպես բնութագրել Զեյթունի ապստամբությունը.

«Հայկական քաջասրտության փառավոր ապացույց»:

1) Մ. Նալբանդյան
2) Մ. Պեշիկթաշլյան
3) Ս. Շահազիզ
4) Ռ. Պատկանյան

23. **Ովքե՞ր են 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունից Արևմտյան Հայաստանում գրավված տարածքները անվանել.** ***«Խիստ հետամնաց, ճանապարհազուրկ և զարգացման համար մեծ միջոցներ պահանջող»***
   1) ռուսական դիվանագետները
   2) հայազգի գեներալները
   3) անգլիացի դիվանագետները
   4) թուրք զինվորականները

24. Ո՞ր իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

   1) Օգոստոս կայսեր կողմից Գայոս Կեսարին մեծ բանակով Հայաստան ուղարկելը
   2) Հռոմեական լեգեոնների պարտությունն ու նվաստացումը Հռանդեայում
   3) Վաղարշի և Տրդատի գլխավորած պարթևական զորքի մուտքը ՀԱյաստան և Հռադամիզդի վտարումը
   4) Հայ-պարթևական միացյալ ուժերի գլուխն անցած Տրդատի մուտքը Արտաշատ և նստելը հայոց գահին
   5) Արտաշատ քաղաքի ավերումը Կորբուլոնի կողմից
   6) Տիգրան IV-ի զոհվելը սարմատական քոչվոր ցեղերի դեմ ճակատամարտում
   7) Խոսրով I-ի արշավանքը Կովկասի լեռնականների դեմ
   8) Սասանյան արքայատոհմի հաստատումը պարսից գահին
   9) Հայոց գահի բռնազավթումը Որմիզդ-Արտաշիրի կողմից

25. Կաթողիկոսների անունները դասավորել ըստ հայրապետական տարիների ժամանակագրական հաջորդականության
   1) Ներսես Ա Պարթև
   2) Հովհաննես Բ Գաբաղենացի
   3) Հովսեփ Վայոցձորցի
   4) Կոմիտաս Մամիկոնյան
   5) Հուսիկ
   6) Սահակ Ձորոփորցի

26. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
   1) Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Ս. Էջմիածնում
   2) Կ. Պոլսի հայոց պատրիարքության հիմնադրումը
   3) Բյուզանդական կայսրության կործանումը
   4) Գանձասարի վանքի դառնալը Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ
   5) Սսից Էջմիածին փոխադրվելու առաջարկի մերժումը Գրիգոր կաթողիկոսի կողմից

27. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
   1) Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կազմավորումը
   2) Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծումը
   3) Արարատյան գնդի կազմավորումը
   4) Ժամանակավոր կառավարության ձևավորումը
   5) Արևելահայ ազգային խորհրդի ստեղծումը

28. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) Գրիգոր Մամիկոնյանի զոհվելը խազարների դեմ պայքարում
2) Քադիսիայի ճակատամարտը
3) Կոմիտաս Մամիկոնյանի օծվելը հայոց կաթողիկոս
4) Վարազտիրոց իշխանի՝ գերությունից հայրենիք վերադառնալը
5) Բյուզանդական կայսեր կողմից Ներսեհ Կամսարականին հայոց իշխան ճանաչելը

29. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) Հալիձորի ճակատամարտը
2) Հովսեփ Էմինի ծնունդը
3) Թուրքական զորքերի ներխուժումը Արցախի Վարանդա գավառ
4) Գյուլիստանի սղնախի պայքարի շարունակումը թուրքերի դեմ Աբրահամ սպարապետի գլխավորությամբ
5) Խամսայի մելիքությունների ստեղծումը

30. Սեպտիմիոս Սևերոսի և Վաղարշ II-ի միջև կնքված պայմանագրի արդյունքում.

1) հռոմեական կայսրը գումար վճարեց հայոց այրուձիին, որը հյուսիսում իրականացնում էր Կովկասյան լեռնանցքների և մերձակա տարածքների պաշտպանությունը լեռնային ցեղերի հարձակումներից
2) Հայաստանը դարձավ «Հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ»
3) Հռոմը օժանդակեց Հայաստանին Սասանյանների դեմ պայքարում
4) կայսրը ճանաչեց Վաղարշի իրավունքները Հյուսիսային Միջագետքի վրա
5) հռոմեական լեգեոնները դուրս բերվեցին ՀԱյաստանից

31. Հայաստանի ռազմական ուժը թուլացնելու նպատակով ի՞նչ կատարեց Հազկերտ II-ը.

1) Հայոց գնդերն ուղարկեց հյուսիս՝ բյուզանդացիների դեմ պատերազմելու
2) Հայոց գնդերն ուղարկեց արևելք՝ քոչվոր հոների դեմ պատերազմելու
3) Հայոց գնդերն ուղարկեց հարավ՝ քոչվոր արաբների դեմ պատերազմելու
4) Հայոց գնդերն ուղարկեց արևմուտք՝ քոչվոր քուշանների դեմ պատերազմելու

32. Ինչո՞ւ 1830-ական թթ. ռուսական իշխանությունները ձեռնամուխ եղան Հայոց եկեղեցու բարեփոխմանը.

1) որովհետև եկեղեցու միջոցով լիովին կհսկեին արևմտահայ ազատագրական շարժումը
2) որովհետև ձգտում էին հսկողության տակ պահելու Հայ առաքելական եկեղեցուն
3) որովհետև քրիստոնեական հավատքը միավորում էր հայ և ռուս ժողովուրդներին
4) որովհետև Ռուսաստանը ձգտում էր լայն արտոնություններ ու լիազորություններ շնորհելու Հայ Առաքելական եկեղեցուն

33. Թվարկվածներից որո՞նք են 1950-1960-ական թթ. հայագիտության զարգացման արդյունքները.

1) «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի հրատարակման սկիզբը
2) «Հրազդան», «Նաիրի» և այլ էլեկտրոնային հաշվիչ բարդ մեքենաների նախագծումը

3) «Հայ նոր գրականության պատմության» երեք հատորների հրատարակումը
4) Ուրարտական և հելլենիստական շրջանի հուշարձանների պեղումները
5) Բյուրականի աստղադիտարանի վերածվելը գիտահետազոտական խոշոր կենտրոնի
6) «Երկունք» և «Նահապետ» պատմական կինոնկարի ստեղծումը

34. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

1) Արևելյան լեգեոնի ստեղծման նպատակը ռուսական զորքերի կազմում թուրքերի դեմ պատերազմում հայ կամավորների մասնակցությունն ապահովելն էր:
2) Նէպի շնորհիվ բարելավեց Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը:
3) 1918 թ. Կ. Պոլսում կոնֆերանս հրավիրելու համար Գերմանիայի շահագրգիռ լինելու իրական պատճառը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը վերանայելու ձգտումն էր:
4) Մայիսյան ապստամբության հետևանքը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումն էր:
5) Փետրվարյան ապստամբության հետևանքը հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակելու և հանրապետություն վերադարձնելու գործընթացի ծավալումն էր:

35. Տրված պնդումներից որո՞նք են 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրի պայմաններից.

1) Յոթ նահանգներից ձևավորվում էին երկու վարչական միավոր՝ Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր կազմով:
2) Դրանք կառավարվելու էին երկու օտարերկրյա ընդհանուր տեսուչների կողմից:
3) Տեսուչներն իրավունք էին ստանում նշանակելու և պաշտոնանկ անելու ապաշնորհ կամ օրինազանց պաշտոնյաներին:
4) Հողային հարցերը պետք է վճռեին սուլթանի կազմած խորհուրդները:
5) Վերացվում էին համիդիե գնդերը:

36. Ստորև բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

1) 1933 թ. ընթացքում սկսվեցին Հայաստանի արդյունաբերական կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները, ինչի շնորհիվ շուտով Կապանում վերսկսվեց պղնձի ձուլումը:
2) 1989 թ. հունվարի 11-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև սահմանեց՝ վարիչների մարմին, որի վրա էր դրվում մարզի պետական մարմինների ղեկավարությունը:
3) Հայոց համազգային շարժման առաջին համագումարը տեղի է ունեցել 1989 թ. հոկտեմբերի 4-ին:
4) ՀՀ նախագահական հինգերորդ ընտրություններն անցկացվեցին 2008 թ. փետրվարի 19-ին:
5) Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) ձևավորվեց 2008 թ. փետրվարին:
6) 1991 թ. փետրվարին խորհրդարանն ընդունեց օրենք, որով ՀՀ-ում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ:

37. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

1) Որպեսզի Կրասոսին ստիպեին Պարթևստանի դեմ արշավել Հայաստանի տարածքով, Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:

2) Հայաստանը պարթևների ավերածություններից և զոհերից զերծ պահելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
3) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր Միջագետքի տափաստաններում անհաջող ռազմական գործողություններ վարելու պարտադրանքով:
4) Պարթևաստանի դեմ ձեռնարկվելիք հաջորդ արշավանքի ծրագիրը քննարկելու և հայ-հռոմեական հակապարթևական պայմանագիր կնքելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
5) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր եղանակային անբարենպաստ պայմաններով և զորքում բռնկված համաճարակով:
6) Որպեսզի պաշտպանեն իրենց դաշնակից Հայաստանի սահմանները, Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
7) Հայաստանը հռոմեացիների ավերածություններից և զոհերից զերծ պահելու նպատակով Արտավազդ II-ը Ք. ա. 34 թ. որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
8) Որպեսզի թույլ չտան Արտավազդ II-ի և Կրասոսի ռազմական ուժերի միավորումը, Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
9) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր հայոց թագավոր Արտավազդ II-ի դավաճանությամբ:

38. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

1) Վարդանակերտի ճակատամարտը
2) «Արյան լճի» մոտ տեղի ունեցած ճակատամարտը
3) Արճեշի ճակատամարտը
4) Արձնիի ճակատամարտը
5) Բագարատ Բագրատունու՝ Հայոց իշխանի կոչման արժանանալը
6) Աշոտ Բագրատունու թագադրումը
7) Սևանի ճակատամարտը
8) Դողս գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը
9) Ստմբատ I-ի ամրանալը Կապույտ բերդում

39. Գործիչներին համապատասխանեցնել նրանց զբաղեցրած պաշտոնին.

1) Գեգեչկորի
2) Գ. Լվով
3) Վ. Փափազյան
4) Վ. Խառլամով
5) Ա. Օզան,յան
6) Ավերյանով

ա. Արևմտահայերի Ազգային խորհրդի նախագահ
բ. Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ
գ. Արևելահայերի Ազգային խորհրդի նախագահ
դ. Արևմտյան Հայաստանի գլխավոր կոմիսար
ե. Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության նախագահ

զ. Անդրկովկասյան հատուկ կոմիտեի նախագահ
է. Արևմտահայերի Ազգային խորհրդի պատվավոր նախագահ

40. Տրված պնդումներից որոնք են սխալ.

1) XIX դարի կեսերին մեծ տերությունների միջև պայքար է սկսվել Ռուսաստանում ազդեցություն տարածելու համար:
2) Ղրիմը վերադարձնելու համար Ռուսաստանը հերթական անգամ հրաժարվել է Արևմտյան Հայաստանում գրաված հողերից և կորցրել իր ազդեցիկ դիրքը միջազգային ասպարեզում:
3) ՀՅԴ ծրագրում որպես մոտակա խնդիր սահմանվել է Արևմտյան Հայաստանի անկախանալը թուրքական բռնապետությունից:
4) Բեռլինի վեհաժողովից հետո հայ հասարակական-քաղաքական գործիչներն իրենց հույսերը սկսում են կապել Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցությամբ զինված պայքար ծավալելու հետ:
5) Օսմանյան կայսրությունում ազդեցություն տարածելու նպատակով եվրոպական մեծ տերությունների միջև պայքարի արդյունքում առաջացած միջազգային հարաբերությունների հիմնախնդիրը ստացել է «Արևելյան հարց» անվանումը:
6) Արմենականները Հայկական հարցի լուծումը կապել են Եվրոպայի օգնության և համաժողովրդական ապստամբության հետ:
7) Հնչակյանները որպես մոտակա նպատակ սահմանել են մարդու կողմից մարդու շահագործման վերացումը և սոցիալիզմի կառուցումը:
8) Տարբեր վայրերում ձևավորված գաղտնի խմբակները հիմք են դարձել հայ ազգային կուսակցությունների ձևավորման համար:

41. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.

1) 1989 թ. օգոստոսի 16
2) 1989 թ. դեկտեմբերի 1
3) 1989 թ. նոյեմբերի 30
4) 1991 թ. դեկտեմբերի 21
5) 1988 թ. նոյեմբերի 24
6) 1989 թ. նոյեմբերի 28

ա. ԽՍՀՄ-ի վերացման և ԱՊՀ ստեղծելու մասին հայտարարությունը Բելովեժյան արգելոց-անտառում
բ. Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամների մասնակցությամբ Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի սկիզբը
գ. Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիզոր ներկայացուցիչների համագումարը
դ. ԱՊՀ ստեղծելու մասին հայտարարությունը Ալմա Աթայում
ե. ԼՂԻՄ-ում Հատուկ կառավարման կոմիտեն վերացնելու մասին ԽՍՀՄ ԳԽ որոշման ընդունումը
զ. պարետային դրություն մտցնելը Երևանում
է. ՀԽՍՀ ԳԽ արտահերթ նստաշրջանի կողմից «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը

42. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) «Թուղթ ընդհանրականի» գրվելը, ուր արձանագրված են ամուսնաընտանեկան որոշ նորմեր
2) Թալինի նշանավոր եկեղեցու կառուցումը
3) Ս. Գայանե եկեղեցու կառուցումը
4) Ավանի եկեղեցու կառուցումը
5) Արուճ ավանում Ս. Գրիգոր եկեղեցու շինարարության ձեռնարկումը
6) Մրենի եկեղեցու կառուցումը

43. Ընտրել «Որոգայթ փառաց» գրքում տեղ գտած տերմինների և հասկացությունների սխալ բացատրությունները.

1) Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը կոչվելու էր «Հայոց տուն»:
2) «Հայոց տունը» պետք է կազմվեր ժողովրդի կողմից նշանակված փոխանորդներից:
3) Փոխանորդներից ընտրված տասներեք հոգուց մեկը վիճակահանությամբ դառնալու էր նախարար (նախագահ):
4) Նախարարը (նախագահ) նշանակում էր իր տեղապահին՝ փոխարքային:
5) «Հայոց տունը» պարտավոր էր ստեղծել հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը:
6) Փոխանորդներից ընտրված տասներեք հոգուց տասներկուսը դառնալու էին նախարարի խորհրդակիցներ:
7) Հայոց թագավորը պետք է նշանակվեր իշխանության ընտրովի բարձրագույն մարմնի կողմից:

44. Որո՞նք են 1940-ական թթ. սփյուռքահայերի հայրենադարձության դադարեցման պատճառները.

1) խորհրդա-թուրքական հարաբերությունների բարելավումը
2) սառը պատերազմը
3) տնտեսական դժվարությունները
4) քաղաքացիություն ստանալու հետ կապված բարդությունները
5) ԽՍՀՄ ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները
6) Խորհրդային Հայաստանի ժողովրդագրական վիճակի վատթարացումը
7) Արաբա-իսրայելական պատերազմը

45. Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը ըստ ժամանակագրական հաջորդականության.

1) Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը
2) Էնվերի սպանությունը
3) Քեմալական զորքերի վերջնականապես հեռանալը Ալեքսանդրապոլից
4) ՆԱզըմի մահապատիժը
5) ԽՍՀՄ-ի կազմավորումը
6) ԱԽՍՀԴՄ-ի ստեղծումը
7) պարենհարկի մտցվելը Խորհրդային Հայաստանում
8) Սայիդ Հալիմի սպանությունը
9) Սևրի պայմանագրի կնքումը
10) Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը

46. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

1) Աքեմենյան տերության դեմ Ալեքսանդր Մակեդոնացին իր արշավանքն սկսել է Ք. ա. 336 թվականին:
2) Մակեդոնացու ստեղծած տերության մայրաքաղաքը Պերսեպոլիսն էր:
3) Օգտվելով Ալեքսանդր Մակեդոնացուց Գավգամելայի ճակատամարտում Դարեհ III-ի կրած պարտությունից՝ հայերը վերականգնեցին իրենց անկախ պետականությունը:
4) Ծոփքի թագավոր հռչակվեց Գավգամելայի ճակատամարտի մասնակից Միթրաուստեսը:
5) Ալեքսանդր Մակեդոնացու հսկայածավալ պետությունը Ք. ա.301 թ. բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը ՀԱյաստանին սահմանակից Պոնտոսի պետությունն էր:
6) Երվանդ III-ն այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ սելևկյան տիրակալ Անտիոքոս III-ի դեմ ապստամբած նրա եղբորը:

47. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

1) Վարազտիրոց Բագրատունին Հերակլ կայսրից ստացել է "պատրիկ-կյուրապաղատի" աստիճան և ճանաչվել հայոց իշխան:
2) Հայ հոգևոր և աշխարհիկ տերերի մի խմբավորում Ներսես Ա կաթողիկոսի գլխավորությամբ շարունակում էր հույսեր կապել քրիստոնյա Բյուզանդիայի օգնության հետ:
3) Թեոդորոս Ռշտունին Բաղդադի կառավարիչ Մուավիայից Հայաստանի հետ միաժամանակ ստացել էր նաև իշխանություն Վիրքի և Աղվանքի՝ մինչև Ճորա պահակն ընկած տարածքների վրա:
4) Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառավարման տարիները նույնպես խաղաղ են անցել, և հայ պատմիչները նրան անվանել են կարգ ու կանոնի բարեպաշտ առաջնորդ:
5) Հայոց իշխան Աշոտ Բագրատունուց հետո կառավարել է Ներսեհ Կամսարականը, որի օրոք էլ կառուցվել է Թալինի նշանավոր եկեղեցին:
6) 701 թ. կազմված Արմինիա վարչաքաղաքական միավորի կենտրոնը սկզբում Պարտավն էր, հետո՝ Դվինը:

48. Գտնել ճիշտ և սխալ պնդումները.

1) Արևելյան Հայաստանի մեծագույն մասը ենթակա էր Իրանին և կազմված էր Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Գանձակի ու Մակուի խանություններից:
2) Ղարաբաղի խանությունը զբաղեցնում էր պատմական Ուտիքի տարածքը և Արցախի մի մասը:
3) Նախիջևանի խանությունը հետագայում մտավ նորաստեղծ Կարսի մարզի կազմը:
4) Երևանի խանության կառավարիչը սարդարն էր, որն օժտված էր ռազմավարչական մեծ իշխանությամբ:
5) Երևանի ու Նախիջևանի խանությունների ավելի քան 2 հազար բնակավայրերի մոտ 1/3-ը ամայի և անմարդաբնակ էր:
6) Վորոնցով-Դաշկովը 182 000 հազարանոց ռուսական բանակի հրամանատարն էր Առաջին աշխարհամարտում:

49. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

1) Ստալինյան բռնաճնշումների զոհ են դարձել հայ զորահրամանատաներ Հայկ Բժշկյանցը, Ստեփան Շահումյանը, Գրիգոր Հարությունյանը և ուրիշներ:

2) Աղասի Խանջյանը տասը տարի ղեկավարել է Հայաստանի կոմկուսը:
3) Երկրորդ աշխարհամարտում առաջին հայ հերոսը Կարապետ Սիմոնյանն էր:
4) Հայրենական մեծ պատերազմի ժամանակ հայկական ազգային դիվիզիաներից առաջինը կռվի դաշտ է մեկնել 51-րդ գվարդիական դիվիզիան:
5) Բալթիկայի համար 1944 թ. մղված մարտերից մեկում է զոհվել ԽՍՀՄ հերոս Նելսոն Ստեփանյանը:
6) Հայրենիքի դավաճանության անհիմն մեղադրանքով 1945 թ. վերջերին ձերբակալվել է ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խամփերյանց):

50. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

1) Սասանյանները 226 թ. տապալեցին պարթև Արշակունիներին և տիրացան գահին:
2) Մինչև VIII դարի կեսերը Սասանյանները տարածաշրջանում վարում էին ծավալապաշտական քաղաքականություն:
3) III դարի երկրորդ կեսին Հայաստանում ստեղծված խառնաշփոթ վիճակը Մովսես Խորենացին անվանել է «ժամանակ անիշխանության»:
4) Խոսրով II-ի որդի Տրդատը 286 թ. հաղթել էր գոթերի իշխանին՝ նրա դեմ մենամարտելով հռոմեական կայսեր փոխարեն:
5) Առաջին անգամ Տրդատ II-ը հայոց գահին հաստատվել է 287 թվականին:
6) Սասանյան արքա Ներսեհը միայն Ոսխայի ճակատամարտում կրած պարտությանը հաջորդող տարում կնքված հաշտությամբ ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:

Հանձնաժողովի նախագահ՝ պրոֆ. էդ. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (25 միավոր)

_____

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(մարզ, դպրոց)

Հեռ.՝ _____

Բոլոր հարցերի արժեքը 0,5 միավոր է: Դրական միավոր կարելի է ստանալ հարցը ամբողջական ճիշտ գրելու դեպքում: Թերի, կիսատ, ոչ ամբողջական կամ սխալ պատասխանները գնահատվում են 0 միավոր: Ենթադրություններ կատարելու դեպքում կարող եք կատարել ուղղումներ հատուկ սահմանված տեղում (կարելի է ուղղել 3 հարց):

1.	1
2.	-
3.	2 (3)
4.	4
5.	2
6.	3
7.	3
8.	3
9.	1
10.	4
11.	2
12.	2
13.	4
14.	1
15.	3
16.	1
17.	1
18.	2
19.	2
20.	3
21.	2
22.	3
23.	1
24.	2,6

25.	5	1	3	2	4	6
26.	4	5	1	3	2	
27	3	4	1	2	5	
28.	3	2	4	1	5	
29	3	2	1	4	5	

30	1	5		
31	2			
32	2			
33	1	3	4	
34	2	5		
35	1	2	3	
36	4	6		
37	7	8	9	
38	2	7		

39	1	2	3	4	5	6
	բ	ե	ա	զ	է	դ
40	1	3	7			
41	1	2	3	4	5	6
	գ	է	բ	դ	զ	ե
42	4	6	3	5	2	1
43	2	4	5	7		
44	2	3	5			
45	1					

Հորիզոնական ուղղությամբ նշում եք X. ճիշտ լինելու դեպքում Ճ տառի ուղղությամբ, սխալ լինելու դեպքում Ս տառի ուղղությամբ:

46	1	2	3	4	5	6	
			X				Ճ
	X	X		X	X	X	Ս
47	1	2	3	4	5	6	
				X	X		Ճ
	X	X	X			X	Ս
48	1	2	3	4	5	6	
	X			X		X	Ճ
		X	X		X		Ս
49	1	2	3	4	5	6	
			X		X	X	Ճ
	X	X		X			Ս
50	1	2	3	4	5	6	
	X		X			X	Ճ
		X		X	X		Ս

Սխալների ուղղում

Առաջին սյունակում անհրաժեշտ է գրել հարցի համարը, իսկ դիմացը՝ պատասխանը: